ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

# ԼՍՈՂԱԿԱՆ ՍԱՐՔԻ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄԻ ՍԱՅԼԱԿԻ

ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

**Սոցիալական թեժ գիծ՝ «114»**
**ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքէջ՝**
**www.mlsa.am**

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թ. սեպտեմբերի 7-ի N 1151-Ն որոշման՝ պետական բյուջեի միջոցներով (անվճար) հաշմանդամի սայլակները և լսողական սարքերը տրամադրվում են պետական հավաստագրերի (այսուհետև՝ հավաստագիր) միջոցով:

Հավաստագրի միջոցով ***հաշմանդամի սայլակ*** ձեռք բերելու իրավունք ունեն՝

- *1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձինք,*
- *«Հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող անձինք,*

Հավաստագրի միջոցով ***լսողական սարք*** ձեռք բերելու իրավունք ունեն միայն *լսողության խնդիրներ ունեցող՝*

- *հաշմանդամություն ունեցող անձինք,*
- *12-ից 18 տարեկան երեխաները՝ անկախ հաշմանդամություն ունենալու հանգամանքից,*
- *տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձինք:*

Հաշմանդամի սայլակները և լսողական սարքերը տրամադրվում են 3 տարի ժամկետով՝ բացառությամբ 12-18 տարեկան երեխաներին և 18-ից 29 տարեկան հաշմանդամություն ունեցող անձանց, ովքեր իրավունք ունեն լսողական սարք ստանալ 5 տարին մեկ անգամ:

Հավաստագիր ձեռք բերելու համար տվյալ պարագան ստանալու իրավունք ունեցող անձինք (Շահառու) կամ նրանց ներկայացուցիչները կարող են «Հանգրվան» ՊՈԱԿ կամ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն կամ սոցիալական աջակցության տարածքային գործակալություն



(բաժին)՝ (այսուհետ՝ ՍԱԾՏԳ/Բ) ներկայացնել դիմում և հետևյալ փաստաթղթերը.

- ***հաշմանդամի սայլակի դեպքում՝***
  - ✓անձնագիրը և հանրային ծառայությունների համարանիշը կամ նույնականացման քարտը (մինչև 16 տարեկան երեխաների համար ծնողներից մեկը կամ այլ օրինական ներկայացուցիչ ներկայացնում է իր անձը հաստատող փաստաթուղթը և երեխայի ծննդյան վկայականը), դրանց պատճեններ,
  - ✓բժշկասոցիալական փորձաքննական որոշումը՝ ԲՍՓ որոշումը (հաշմանդամության վկայականը), նաև դրա պատճենը,
  - ✓Վերականգնողական անհատական ծրագիրը (ՎԱԾ), որով երաշխավորված է հաշմանդամի սայլակը, դրա պատճենը,
- ***լսողական սարքի դեպքում*** *բացի անձը հաստատող փաստաթղթերից նաև՝*
  - ✓ տեղեկանք լսողության կորստի աստիճանի և լսողական սարքի անհրաժեշտության վերաբերյալ՝ և աուդիոգրամման (աուդիոմետրիայի տվյալները), դրանց պատճենները (տրվում է անձի բնակության վայրի առաջնային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կամ մասնագիտացված բժշկական կազմակերպության կողմից),
  - ✓ հաշմանդամություն ունենալու դեպքում նաև ԲՍՓ որոշումը (հաշմանդամության վկայականը) և ՎԱԾ-ը, որով երաշխավորված է լսողական սարքը, դրանց պատճենները

Փաստաթղթերը և դիմումը կարող են ներկայացվել *առձեռն, փոստային առաքումով կամ էլեկտրոնային փոստով*:

❖ *Առձեռն ներկայացնելիս՝*

➢ «Հանգրվան» ՊՈԱԿ, որտեղ Շահառուն կամ նրա ներկայացուցիչը հավաստագիրը ստանում է առձեռն՝ ընդ որում ներկայացուցիչը պետք է ներկայացնի նաև իր անձը հաստատող փաստաթուղթը և Շահառուի փաստաթղթերի բնօրինակները,

➢ *Նախարարություն և ՍԱԾՏԳ/Բ-ներ*, որտեղ ստուգվում են դրանց լիարժեքությունը և ուղարկվում «Հանգրվան» ՊՈԱԿ՝ այդ մասին հայտնելով դիմողին:

❖ *Փոստային առաքմամբ՝*

➢ Նախարարությունում և «Հանգրվան» ՊՈԱԿ-ում 5 աշխատանքային օրվա ընթացքում ստուգվում է ներկայացված փաստաթղթերի (բնօրինակների, բացառությամբ անձը հաստատող փաստաթղթերի) լիարժեքությունը և Շահառուի փաստացի բնակության հասցեով երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում են հավաստագիրը և ներկայացված փաստաթղթերի բնօրինակները:

❖ *Էլ. փոստով՝* փաստաթղթերի լուսապատճենները և դիմումը ուղարկվում են նախարարության info@mlsa.am պաշտոնական էլեկտրոնային փոստով:

***Փաստաթղթերում անճշտություններ հայտնաբերվելու դեպքում երկու աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացվում է դիմողին:***



Հավաստագրի հետ միասին դիմողին տրամադրվում են նաև այն կազմակերպությունների ցանկը, հասցեները և կոնտակտային տվյալները, որտեղից անձը կարող է վերցնել իր կարիքներին համապատասխան հաշմանդամի սայլակ կամ լսողական սարք: Հավաստագրերի հիման վրա տրամադրվող պարագաների տեսակների, դրանց գների, տեխնիկական բնութագրերի և այլնի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը տեղադրված է նախարարության պաշտոնական կայքէջի գլխավոր էջում:

Շահառուն իր անձը հաստատող փաստաթղթերով և ստացած հավաստագրով դիմում է նախարարության հետ պայմանագիր կնքած կազմակերպություն և ընտրում իր կարիքներին համապատասխան հաշմանդամի սայլակ կամ լսողական սարք:

➢ Եթե անձն արդեն ունի սայլակ կամ, եթե նրա նախընտրած սայլակն ավելի էժան է, քան հավաստագրի արժեքը, ապա կարող է հավաստագրի գնային արժեքի սահմաններում ձեռք բերել այլ պահեստամասեր կամ հարակից այլ պարագաներ (մարտկոցներ, անիվներ, կառավարման վահանակներ և այլն), որոնք օգտագործվում են սայլակի ֆունկցիոնալությունը, երկարակեցությունը կամ հարմարավետությունն ապահովելու համար:

➢ Եթե շահառուի նախընտրած հաշմանդամի սայլակի կամ լսողական սարքի գինը բարձր է հավաստագրի գնային արժեքից, ապա շահառուն կարող է ձեռք բերել իր նախընտրած պարագան՝ վճարելով արժեքի տարբերությունը:

➢ Եթե անձը չի օգտագործում ձեռք բերված և ուժի մեջ գտնվող հաշմանդամի սայլակի հավաստագիրը, ապա դրա գնային



արժեքը հաջորդ տարիների համար ավելանում է ձեռք բերված հավաստագրի արժեքի 25 տոկոսի չափով՝ յուրաքանչյուր հաջորդող տարիների համար: Ավելացած արժեքով հավաստագիր ձեռք բերելու համար անձը դիմում է նախարարություն կամ ՍԱԾՏԳ/Բ կամ «Հանգրվան» ՊՈԱԿ՝ ներկայացնելով նաև չօգտագործված հավաստագիրը:

Հավաստագրի գնային արժեքը սահմանվում է յուրաքանչյուր տարի՝ ՀՀ պետական բյուջեով հաշմանդամի սայլակի և լսողական սարքի ձեռքբերման համար նախատեսված միջոցների շրջանակներում:

❖ 2017-2018 թթ. հաշմանդամի սայլակի ձեռքբերման համար հավաստագրի գնային արժեքն է **95 հազ. ՀՀ դրամ,**

❖ 2017-2018 թթ. լսողական սարքերի ձեռքբերման համար հավաստագրի գնային արժեքներն են՝

➢ 12-18 տարեկան երեխաներին և 18-ից 29 տարեկան՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ **80 հազ. ՀՀ դրամ,**

➢ 30 տարեկան և ավելի բարձր տարիքի՝ հաշմանդամություն ունեցող, տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձանց համար՝ **30 հազ. ՀՀ դրամ:**

**Հաշմանդամի սայլակի հավաստագիրն ուժի մեջ է 1 տարի ժամկետով, իսկ լսողական սարքի հավաստագիրը՝ մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 20-ը:**

**Հանգրվան» ՊՈԱԿ՝ հասցե ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 3/14, հեռ.՝ 011 990-996**